

ՀՀ տնտեսության ներդրումների ներգրավման ռազմավարության մշակման մեթոդաբանությունը ՀՏԴ՝ 339.727.22/24

Գևորգյան Ա. Վ.

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվ. տնտեսագիտության ինստիտուտի հայցորդ (Երևան, Հայաստան)
mrsarminegevorgyan1987@gmail.com

Վճռորոշ բառեր: ներդրումներ ներգրավում, ետնդնաժամային իրավիճակ, ռազմավարություն, մեթոդաբանություն, օտարերկրյա ներդրումներ, տնտեսության վերականգնում:

Методология разработки стратегии привлечения инвестиций в посткризисных ситуациях в РА

Геворгян А. В.

Соискатель Института экономики им. М. Котаняна, НАН РА (Ереван, Армения)
mrsarminegevorgyan1987@gmail.com

Аннотация: В статье изучены соответствующие анализы в экономической литературе по привлечению инвестиций, анализирована динамика инвестиций в Республику Армения и другие статистические данные. На основе расчета по индексу выявленных сравнительных преимуществ, были выявлены области, выгодные для инвестиций с точки зрения экспорта на рынки соседних стран и стран-ЕАЭС. Регулярный расчет этих данных позволит представить инвесторам потенциал экономики Армении, преодолев кризисную ситуацию в экономике Армении как результат пандемии и арцахской войны. Цель данной статьи-описывать методологию разработки стратегии привлечения инвестиций в экономику Республики Армения в пост-кризисных ситуациях. В этом контексте была анализирована инвестиционная среда Армении, были выявлены слабые стороны экономики для привлечения инвестиций и предложены методологические шаги для разработки стратегии привлечения инвестиций.

Ключевые слова: Привлечение инвестиций, посткризисная ситуация, стратегия, методология, иностранные инвестиции, восстановление экономики

Methodology to Develop a Strategy for Attracting Investments in Post-Crisis Situations in RA

Gevorgyan A. V.

Researcher at the M. Kotanyan institute of economics, NAS RA (Yerevan, Armenia)
mrsarminegevorgyan1987@gmail.com

Annotation: The article studies the relevant analyzes in the economic literature on attracting investments, analyzes the dynamics of investments in the Republic of Armenia and other statistical data. Based on the calculation by the index of revealed comparative advantages, were identified the sectors that are profitable for investment in terms of exports to the markets of neighboring countries and the EAEU countries. Regular calculation of these data will allow presenting the potential of the Armenian economy to investors, overcoming the crisis situation in the Armenian economy as a result of the pandemic and the Artsakh war. The aim of this article is to describe the methodology for developing a strategy to attract investments into the economy of the Republic of Armenia in post-crisis situations. In this context, the investment environment of Armenia was analyzed, the weaknesses of the economy for attracting investments were identified and methodological steps were proposed to develop the strategy for attracting investments.

Keywords: Attraction of investments, post-crisis situation, strategy, methodology, foreign investments, economic recovery

Ներածություն

Հայաստանի Հանրապետությունը նախկին ԽՍՀՄ մյուս հանրապետությունների նման հայտնվեցին ճգնաժամային իրավիճակում ԽՍՀՄ փլուզումից հետո՝ կորցնելով արտաքին տնտեսական կապերը: Թերևս Հայաստանի իրավիճակն էականորեն տարբերվում էր մյուս ԽՍՀՄ հանրապետություններից, քանզի այստեղ ճգնաժամն առավել խոր բնույթ էր ստանում

1988 թ. ավերիչ երկրաշարժի ու 1992-1994 թթ. Արցախյան պատերազմի, ինչպես նաև 4 հարևան երկրներից 2-ի հետ առկա փակ սահմանների արդյունքում: Նման իրավիճակում երկրի վերականգնման համար արտաքին օգնության անհրաժեշտություն առաջացավ, որն էլ Հայաստանը ստացավ միջազգային վարկերի, օգնությունների, օտարերկրյա ներդրումների և այլնի տեսքով:

Ցավոք, դա միակ ճգնաժամային ժամանակահատվածը չէ անկախ Հայաստանի պատմության մեջ: Հայաստանի տնտեսության զարգացման համար ճգնաժամային պետք է համարել նաև 2007-2009 թթ. համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի և 2020 թ. համավարակի և Արցախյան 44-օրյա պատերազմի ազդեցությունները: Տվյալ հոդվածի շրջանակներում կդիտարկենք վերջին ճգնաժամային փուլի տնտեսության զարգացմանը համընթաց ներդրումների ներգրավման հնարավորությունները <<-ում:

Գրականության ակնարկ

Տնտեսագիտական գրականությունում բազմաթիվ են ներդրումների ներգրավմանը վերաբերող վերլուծությունները: Հասկանալու համար ճգնաժամային իրավիճակներում ներդրումների ներգրավման հնարավորությունները՝ նախ և առաջ պետք է դիտարկել ներդրումների ներհոսքի շարժառիթները: Համադրելով և համեմատելով տարբեր տնտեսագետների կողմից ներկայացված տեսակետները՝ կարող ենք ամփոփ կերպով ներկայացնել օտարերկրյա ներդրումների հիմնական շարժառիթներ:

1. Համաշխարհային տնտեսությունում տարբերակում են զարգացած և զարգացող երկրներ, որոնցում ձևավորվել է կապիտալի նկատմամբ առաջարկի և պահանջարկի անհամապատասխանությունը: Մի շարք տնտեսագետներ կարծում են, որ երկրներում կապիտալի կուտակման անհամաչափությամբ է պայմանավորված տվյալ երկրի տնտեսական զարգացման մակարդակները: Այլ կերպ ասած՝ համաշխարհային տնտեսությունում ձևավորվել են որոշ երկրներ, որոնցում առկա է կապիտալի «հարաբերական ավելցուկ», իսկ մյուսներում՝ «պակասորդ»: Մա էլ դրդում է կապիտալի ավելցուկ ունեցող երկրներին իրենց կապիտալն ուղղել պակասուրդ ունեցող երկրներ՝ լրացուցիչ շահույթ ստանալու ակնկալիքով [2, էջ 58-62, 4, էջ 3-5]:
2. Երկրների զարգացմանը զուգահեռ այս կամ այն երկրի ներքին շուկան դառնում է գրավիչ որոշակի ապրանքների վաճառքի տեսանկյունից՝ կախված բնակչության քանակից, գնողունակությունից, ճաշակից և այլ գործոններից: Ուստի տնտեսագետների մեկ այլ խումբ գտնում է, որ տվյալ երկրի շուկայի գրավչությունը կարող է նպաստել օտարերկրյա ներդրումների ներհոսքին դեպի տվյալ երկիր [3, էջ 14-19]: Այս իրավիճակում օտարերկրյա ներդրողի համար ներդրում կատարելու հիմնական շարժառիթը արտահանման ծախսերի կրճատումն ու արտահանման շուկաների մոտեցումն է, ինչպես նաև տվյալ երկրի

- հարակից երկրների շուկաներ մուտքի հնարավորությունը: Այս շարժառիթը հաճախ օգտագործում են մեծ ներքին սպառման շուկա ունեցող երկրները: Իսկ Հայաստանի պարագայում այն հնարավոր կլինի օգտագործել՝ շնորհիվ ԵԱՏՄ շուկա արտոնյալ պայմաններով մուտքի հնարավորության:
3. Վերլուծաբանները պնդում են, որ ներդրումների ներհոսք կարող է ապահովվել նաև շնորհիվ երկրում առկա էժան հումքի և աշխատուժի: Ժամանակակից պայմաններում մշտապես սրվող մրցակցության համատեքստում ներդրողները ձգտում են առավելագույն շահույթի ստացման՝ ի թիվս այլ գործոնների նաև ծախսերը հնարավորինս կրճատելու միջոցով: Այս հանգամանքից թերևս զգալիորեն օգտվել են ասիական զարգացող երկրները, որոնք էժան աշխատուժի առկայության շնորհիվ կարողացել են ներգրավել բազմաթիվ վերագրային կորպորացիաների ներդրումներ, ինչի արդյունքում էլ դրանցից շատերը կարճ ժամանակ անց կարողացան ապահովել թոփքաձև տնտեսական ան [6, էջ 247]:
 4. Զարգացող երկրների մեկ այլ առանձնահատկություն է հանդիսանում նաև ցածր բնապահպանական վճարները, որոնք հնարավորություն են տալիս շատ փոքր վճարների պարագայում շահագործելու տվյալ երկրի հանքահումքային ռեսուրսները: Համեմատության համար պետք է նշել, որ համանման արտադրությունը զարգացած երկրում հիմնելու պարագայում, կազմակերպությունը անհամեմատ մեծ բնապահպանական վճարներ պետք է կատարեր, ինչն էլ հաճախ ստիպում է ներդրողներին շրջակա միջավայրին վնասող արտադրությունների իրականացման համար ներդրումների իրականացման որոշումները կայացնել հոգուտ զարգացող երկրների [1, էջ 45-46]:
 5. Երկրի ներդրումային յուրահատուկ միջավայրի ապահովումը ևս կարող է հանդիսանալ օտարերկրյա ներդրումների ներգրավման գործոններից մեկը: Մասնավորապես՝ օֆշորային կամ ազատ առևտրային գոտու սահմանումը հաճախ ստիպում է ներդրողներին փոխելու ներդրում կատարելու նախապատվությունը՝ հոգուտ արտոնյալ պայմաններ ապահովող երկրների [5, էջ 20-21]:
 6. Թերևս գրեթե բոլոր տնտեսագետները օտարերկրյա ներդրումների ներգրավման համար նպաստավոր գործոններ են համարում նաև տվյալ երկրում կայուն քաղաքական, տնտեսական և անվտանգային միջավայրի առկայությունը [8, էջ 3-6]:

Այդուհանդերձ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ այս հոդվածի շրջանակներում մենք դիտարկելու ենք ճգնաժամային և հետճգնաժամային իրավիճակներում ներդրումների ներգրավման հնարավորությունները, ուստի ի սկզբանե ենթադրում ենք, որ պետք է ներդրումների ներգրավման հնարավորությունները ներկայացնել համեմատաբար անկայուն տնտեսական, քաղաքական և ռազմական իրավիճակի պայմաններում:

Վերլուծություն:

Հայաստանի ներքին սպառողական շուկան բավական փոքր է, ինչի արդյունքում զգալիորեն նվազում է ՀՀ ներդրումային գրավչությունը: Թերևս այս հիմնախնդիրը առավել ևս սրվում է ճգնաժամային ժամանակահատվածում: 2015 թ. ՀՀ կառավարությունը փորձեց ԵԱՏՄ անդամակցությամբ որոշակիորեն նվազեցնել փոքր ներքին շուկայի առկայության հիմնախնդիրը ներդրումների ներգրավման տեսանկյունից: 2015-2020 թթ. ՀՀ օտարերկրյա և օտարերկրյա ուղղակի ներդրումների դինամիկան ներկայացված է աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1. ՀՀ Օտարերկրյա ներդրումների դինամիկան 2015-2020թթ, մլն դրամ [9]

2015 թ.	ընդամենը ներդրումներ	132887.0
	ուղղակի ներդրումներ	82930.1
2016 թ.	ընդամենը ներդրումներ	86565.3
	ուղղակի ներդրումներ	68539.2
2017 թ.	ընդամենը ներդրումներ	58032.3
	ուղղակի ներդրումներ	84819.3
2018 թ.	ընդամենը ներդրումներ	28004.3
	ուղղակի ներդրումներ	88127.8
2019 թ.	ընդամենը ներդրումներ	173977.2
	ուղղակի ներդրումներ	56905.5
2020 թ.	ընդամենը ներդրումներ	30255.4
	ուղղակի ներդրումներ	-7109.5

Չնայած այն հանգամանքի, որ համաձայն տեսական հիմնադրույթների ինտեգրացիոն միավորման անդամակցության արդյունքում նոր շուկաների մուտքի հնարավորությունը օտարերկրյա ներդրողներին կարող էր ստիպել որոշում կայացնել հոգուտ ՀՀ տնտեսության, այդուհանդերձ աղյուսակ 1-ի տվյալները վկայում են այն մասին, որ 2015-2018 թթ. օտարերկրյա ընդհանուր ներդրումների ներհոսքը դեպի ՀՀ գրանցել է կայուն անկման միտում և միայն 2018-2019 թթ. զգալիորեն աճել է օտարերկրյա ներդրումների ներհոսքը: Ինչ վերաբերում է օտարերկրյա ուղղակի ներդրումներին, ապա դրանց ներհոսքը աճել է 2016-2018 թթ., իսկ 2018-2020 թթ. գրանցել է աննախադեպ անկման միտում:

Ստացվում է, որ Հայաստանը չի կարողացել լիարժեք օգտագործել ԵԱՏՄ անդամակցության արդյունքում արտոնյալ պայմաններով դեպի ԵԱՏՄ բազմամիլիոնանոց շուկա դուրս գալու հնարավորությունը՝ որպես օտարերկրյա ներդրումների ներգրավման շարժառիթ:

Վերլուծությունները ցույց են տալիս, որ ՀՀ տնտեսությունում ՕՈՒՄ ներհոսքը նպաստում է տնտեսական աճին այ միայն ներդրում իրականացնելու պահին, այլև հետագա եռամսյակներում, մասնավորապես՝ ՕՈՒՄ ներհոսքի ավելացումը 1 միավորով նպաստում է ՀՆԱ-ի աճին 0,03 միավորով նույն ժամանակահատվածում, 0,049 միավորով հաջորդ եռամսյակում, 0,05 միավորով՝ 2 եռամսյակ անց և 0,039 միավորով՝ 3 եռամսյակ հետո [7]:

Ստացվում է, որ տնտեսության վերականգնման համար օտարերկրյա ներդրումների ներգրավումը դառնում է ՀՀ տնտեսության հրամայականներից մեկը:

Առավել ևս ներկայիս հետպատերազմական իրավիճակում ՀՀ կառավարությունը պետք է օգտագործի բոլոր մեծ ու փոքր հնարավորությունները՝ որպեսզի կարողանա իրականացնել ներդրումների ներգրավման արդյունավետ քաղաքականություն: Փաստորեն ճգնաժամային իրավիճակներում ներդրումների ներգրավման արդյունավետ ռազմավարության մշակման համար նախ և առաջ անհրաժեշտ է պարզել ի՞նչ կարող է առաջարկել Հայաստանը օտարերկրյա ներդրողներին և ո՞րը կարող է լինել այն խթանը, հանուն որի ներդրողները կհամաձայնեն ներդրումներ իրականացնել հետճգնաժամային իրավիճակում գտնվող Հայաստանում:

Կարծում ենք փոքր ներքին շուկայի առկայությունից բխող հիմնախնդիրները հնարավոր է լուծել՝ ներդրողներին հստակ ներկայացնելով, թե ՀՀ տնտեսության որ ոլորտում իրականացված ներդրումը կարող է արդյունավետ լինել արտաքին շուկաներ դուրս գալու տեսանկյունից: Տվյալ պարագայում անհրաժեշտ է հստակ հաշվարկների միջոցով օտարերկրյա ներդրողներին ներկայացնել ՀՀ տնտեսության այն ոլորտները, որոնք մշտապես ունեցել են արտահանման համեմատական կամ մրցակցային առավելություն, ինչպես նաև այն ոլորտները, որոնք կարճաժամկետ կամ միջնաժամկետ ժամանակահատվածում կարող են շահավետ դառնալ արտահանման տեսանկյունից՝ մեկնաբանելով այդ ոլորտներից յուրաքանչյուրում ներդրումների իրականացման առանձնահատկությունները: Ընդ որում՝ հաշվարկները անհրաժեշտ է կատարել յուրաքանչյուր թիրախային շուկայի համար առանձին-առանձին, քանզի արտահանման համեմատական և մրցակցային առավելությունները փոխվում են՝ կախված սպառման շուկայից: Այս մոտեցումը, թերևս առաջին քայլը

կլինի ՀՀ տնտեսության հանդեպ ներդրողների մոտ վստահության վերականգնման համար: Մասնավորապես՝ առաջին փուլի համար առաջարկում ենք հաշվարկների միջոցով ցույց տալ ՀՀ տնտեսության այն ոլորտները որոնք արտահանման մրցակցային և համեմատական առավելություն ունեն Վրաստանի, Իրանի, Ռուսաստանի, Բելառուսի, Ղազախստանի և Ղրղզստանի շուկաներ արտահանման տեսանկյունից, երկրորդ փուլում արդեն կթիրախավորվի ամերիկյան և եվրոպական տարածաշրջանի երկրների համար համանման հաշվարկների իրականացումը: Մասնավորապես՝ մեր կողմից կատարված հաշվարկները ցույց են տալիս, որ 2010-2020 թթ. ընթացքում ՀՀ-ն դեպի Վրաստանի շուկա արտահանման համեմատական առավելություն ունեցել է «Կենդանի կենդանիներ», «Մուրճ, թեյ, մատե, այլ համեմունքներ», «Մսից, ձկներից և այլ ծովային անողնաշարավորներից արտադրանք», «Ոգելից և ոչ ոգելից ըմպելիքներ և քացախ» ապրանքախմբերի տեսանկյունից: Իրանի շուկայում նույն ժամանակահատվածում արտահանման կայուն համեմատական առավելություն գրանցած ապրանքախմբերը «Աղ, ծծումբ, հող և քար, սվաղման նյութեր, կրաքար և ցեմենտ» և «Հանքային վառելանյութեր, նավթ և նավթամթերք, բիտումային միջոցներ, մոմանյութեր»-ն են: Դեպի Ռուսաստանի շուկա արտահանման մշտական համեմատական առավելություն ունեցել են հետևյալ ապրանքախմբերը՝ «Ձուկ և խեցգետնավորներ», «Ուտելի մրգեր և ընկույզներ», «Մուրճ, թեյ, մատե, այլ համեմունքներ», «Բանջարեղենի, պտուղների, ընկույզների և բույսերի մասերի վերամշակումից մթերք», «Ոգելից և ոչ ոգելից ըմպելիքներ և քացախ», «Ծխախոտ և ծխախոտի արդյունաբերական փոխարինողներ», «Աղ, ծծումբ, հող և քար, սվաղման նյութեր, կրաքար և ցեմենտ», «Իրեր քարից, գիպսից, ցեմենտից և նմանատիպ նյութերից», «Բնական կամ արհեստական մարգարիտ, թանկարժեք կամ կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ», դեպի Բելառուսի շուկա՝ «Բանջարեղենի, պտուղների, ընկույզների և բույսերի մասերի վերամշակումից մթերք», «Ոգելից և ոչ ոգելից ըմպելիքներ և քացախ», «Աղ, ծծումբ, հող և քար, սվաղման նյութեր, կրաքար և ցեմենտ» ապրանքախմբերը, դեպի Ղազախստանի շուկա՝ «Ոգելից և ոչ ոգելից ըմպելիքներ և քացախ», «Դեղագործական մթերք», «Բնական կամ արհեստական մարգարիտ, թանկարժեք կամ կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ»-ը և Ղրղզստանի շուկայում՝ «Ոգելից և ոչ ոգելից ըմպելիքներ և քացախ», «Դեղագործական մթերք», «Օպտիկական, լուսանկարչական չափիչ, բժշկական կամ վիրաբուժական սարքեր

և ապարատներ, դրանց մասեր և հարմարանքներ» ապրանքախմբերը: Բնականաբար համանման հաշվարկները պետք է շարունակական լինեն՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ այս կամ այն գործոնի ազդեցությամբ ՀՀ-ն կարող է կորցնել որևէ շուկայում արտահանման համեմատական առավելությունը կամ ձեռք բերել նորերը:

Ներդրումների ներգրավման ռազմավարության մեթոդաբանական հաջորդ սկզբունքը պետք է լինի ներդրողների մոտ կանխատեսելիության գիտակցության ամրապնդումը: Մինչ օրս ՀՀ-ում ներդրում իրականացնող անձիք մշտապես հանդիպել են անկանխատեսելի կերպով տնտեսական փոփոխությունների իրականացման խնդրին՝ հարկային օրենսդրության մշտական փոփոխություն, ինտեգրացիոն միավորումների անդամակցության անկանխատեսելիություն և այլն: Միայն չենք լինի ասելով, որ ՀՀ-ում ներդրում կատարող տնտեսական սուբյեկտը վստահորեն չի կարողացել հաշվարկել իր քայլերը անգամ տասնամյա ժամանակահատվածի համար, քանզի փոփոխություններն իրականացվել են նվազ քան 10 տարին մեկ անգամ: Ուստի առավել ևս հետճգնաժամային իրավիճակների հաղթահարման պարագայում նման մոտեցումը բնավ չի կարող խրախուսել ներդրումների ներհոսք: Այդ պատճառով անհրաժեշտ է մշակել երկրի զարգացման երկարաժամկետ ռազմավարություն, որն անշեղորեն կկատարեն բոլոր նոր ձևավորվող կառավարությունները՝ ենթարկելով միայն իրավիճակային շտկումների: Թերևս մինչ օրս ՀՀ տնտեսական քաղաքականությունը էական փոփոխությունների է ենթարկվել ոչ միայն յուրաքանչյուր կառավարության ձևավորմանը գուցահեռ, այլև կախված նաև ոլորտային նախարարների փոփոխությունից՝ սվյալ ոլորտում տեղի են ունեցել քաղաքականության էական փոփոխություններ: Չարգացման երկարաժամկետ ռազմավարության մշակումն էականորեն կնձագնի ներդրողների վստահությունը Հայաստանի հանդեպ՝ որպես կայուն տնտեսական քաղաքականություն վարող երկրի և կխթանի ներդրումների ներհոսքը:

Ներդրումների ներգրավման ռազմավարության մշակման համար նաև անհրաժեշտ է համեմատական վերլուծության ենթարկել ՀՀ և ԵԱՏՄ երկրների ներդրումային միջավայրերը: Տվյալ պարագայում համարվում է, որ Հայաստանը որոշակիորեն չեզոքացրել է փոքր ներքին սպառման շուկայի հետ կապված զսպող գործոնը՝ անդամակցելով ԵԱՏՄ-ին: Ուստի անհրաժեշտ է հստակ պատկերացում կազմել ԵԱՏՄ մյուս երկրների համեմատ ՀՀ ներդրումային միջավայրի առավելությունների և

թերությունների մասին, որից հետո առկա առավելությունները պետք է կարողանալ հասցնել ներդրողների թիրախային խմբերին, իսկ թերությունների շտկմանն ուղղված քայլեր անհրաժեշտ է ձեռնարկել օր առաջ: Հատկապես նման հետճգնաժամային իրավիճակում, որում գտնվում է Հայաստանն այսօր օր առաջ ներդրումների ներգրավումը կարող է էապես արագացնել տնտեսության վերականգնման գործընթացը: Այս համատեքստում առաջարկվում է առանձնացնել ներդրումային միջավայրի վրա ազդող գործոնների համախումբ, որոնց միջոցով էլ պարբերաբար մշտադիտարկման կենթարկվի ՀՀ ներդրումային միջավայրը: Տարբեր հետազոտողներ ներդրումային միջավայրի ուսումնասիրության համար ընտրում են գործոնների տարբեր համախմբեր: Մեր կողմից առանձնացվել է ներդրումային միջավայրի համեմատական վերլուծության համար 60 գործոնից բաղկացած համախումբ, որոնց մի մասը բնորոշում են երկրի մակրոտնտեսական ցուցանիշները, մի մասը՝ միկրո ոլորտի խնդիրները, երրորդները՝ օրենսդրական և ընթացակարգային ցուցանիշներ են և այլն:

Նշենք, սակայն, որ վերոբերյալ մեթոդաբանական սկզբունքները վերաբերում են բացառապես ներդրումային միջավայրին: Այդուհանդերձ չենք կարող չխոստովանել, որ ներդրումների ներգրավման վրա զգալի ազդեցություն են ունենում նաև երկրի տնտեսության համար առավել մակրո բնույթի գործոններ: Օրինակ՝ չի կարող ներդրողների համար գրավիչ հանդիսանալ մի երկիր, որն իրականացրել է վերոնշյալ 3 սկզբունքները, սակայն ունի տնտեսությունում կոռուպցիայի բարձր մակարդակ:

Մեկ այլ մակրո բնույթի խնդիր է իրավիճակի ճիշտ գնահատումը: Մինչ օրս ՀՀ-ում բազմիցս են մշակվել ոլորտային զարգացման ռազմավարություններ, որոնցում կարմիր գծի նման անցնում է միևնույն սխալը՝ իրավիճակի սխալ նկարագրությունը: Սա առաջին հայացքից կարող է թվալ աննշան մանրուք, սակայն եթե մենք հստակ պատկերացում չունենք, թե որ դիրքում է գտնվում երկիրը այս կամ այն հարցի տեսանկյունից և ինչպիսին է եղել երկրի դիրքի փոփոխության դինամիկան վերջին ժամանակահատվածում, ապա չենք կարողանա մշակել ճիշտ ռազմավարություն մեր նախանշած թիրախին հասնելու համար:

Եվ ի վերջո կրկին մակրո բնույթի և ոչ պակաս կարևոր հիմնախնդիրներից է պետական մարմինների գործառնությունների կրկնությունը: ՀՀ անկախացման տարիներից մինչ օրս ՀՀ պետական կառավարման համակարգը բազմիցս է ենթարկվել օպտիմալացումների, այդուհանդերձ, կարծում ենք պետական համակարգի

լիարժեք օպտիմալացում հնարավոր կլինի իրականացնել միայն այն դեպքում, եթե բացառվի պետական կառավարման համակարգում տարբեր մարմինների միջև բաշխված գործառնությունների կրկնությունը: Ինչո՞վ է վտանգավոր գործառնությունների կրկնությունը տնտեսության զարգացման տեսանկյունից: Նախ և առաջ սա հանգեցնում է պետական ֆինանսների անարդյունավետ ծախսման, քանի որ նույն գործառնությի կատարման համար վճարվում են մի քանի պետական մարմիններ: Ավելին՝ արդյունքում տվյալ գործառնությի լավագույն դեպքում թերակատարվում է, իսկ վատագույն դեպքում՝ այն կատարող մարմինների գործունեությունը հակասում է միմյանց և ստացվում է, որ գործառնությի ոչ միայն չի կատարվել, այլև այդ մասով իրավիճակն ավելի է վատթարացել:

Եզրակացություն:

Այլևս գաղտնիք չէ, որ ներկայում ՀՀ տնտեսությունը գտնվում է խոր ճգնաժամի մեջ, ինչին իրենց զգալի նպաստումն են ունեցել համավարակն ու Արցախյան պատերազմը: Հասկանալի է, որ այս իրավիճակում ՀՀ տնտեսական ճգնաժամը չի կրում համընդհանուր բնույթ և էականորեն տարբերվում է աշխարհի մյուս երկրների տնտեսական վիճակի վատթարացումից, ուստի այս իրավիճակից ելքերը ևս պետք է լինեն առանձնահատուկ: Արդեն իսկ նշեցինք, որ փոքր տնտեսություն և սահմանափակ ներքին շուկաներ ունեցող երկրները չեն կարող արագ զարգանալ միայն սեփական շեռուքների վրա հիմնվելով, ուստի ներդրումների ներգրավումը չափազանց կարևոր է նման երկրների համար: Հայաստանի պարագայում այդ կարևորությունը բազմակի մեծանում է ստեղծված ճգնաժամային իրավիճակում: Պետք է հստակ գիտակցել, որ այլևս դրված է երկրի շենացման կամ կործանման երկրնտրանքի հարցը: Եվ միայն առավելագույնս արդյունավետ լուծումներով է հնարավոր ընտրել շենացման ուղին: Այդ նպատակով մեր կողմից մշակվել են տվյալ իրավիճակում ՀՀ ներդրումների ներգրավման ռազմավարության մեթոդաբանության հիմնական սկզբունքները՝ հիմնվելով ինչպես ընդհանուր տնտեսությանն առնչվող հիմնահարցերի, այնպես էլ անմիջականորեն ներդրումային դաշտին առնչվող հիմնադրությունների վրա: Մեր կողմից մշակված մեթոդաբանության իրագործման հասցեատերը ՀՀ կառավարությունն է, որը որդեգրելով ճգնաժամային իրավիճակից դուրս գալու ուղին՝ պետք է համանման մեթոդաբանությամբ մշակի և իրականացնի մյուս բոլոր ոլորտների զարգացման ռազմավարությունները:

Օգտագործված գրականության ցանկ

1. **Սարգսյան, Լ. Ն.** Ներդրումների ներգրավման և արտահանման ընդլայնման հեռանկարները Հայաստանի Հանրապետությունում / Լ. Ն. Սարգսյան, -Եր.: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2019. – 320 էջ [Sargsyan L. N., Nerdrowmneri nergravman & artahanman y'ndlaynman her'ankarnery' Hayastani Hanrapetowt'yownowm / L. N. Sargsyan, - Er.: HH GAA «Gitowt'yown» hrat., 2019, -320e'j- in armenian]
2. **Гитман, Л. Дж. и Джонк, М. Д.** Основы инвестирования. - М. Дело. 1997. 108 с. [Gitman L.Dzh. Dzhonk M.D. Osnovy investirovaniya. - M.Delo. 1997. 108 s.-in russian]
3. **Committee** on the global financial system, Capital flows and emerging market economies, January, 2009, (<http://www.bis.org/publ/cgfs33.pdf>)
4. **Evana, M. D. D. & Hnatkovaka, V.** International capital flows, returns and world financial integration, September, 2005 https://www.ecb.europa.eu/events/pdf/conferences/fgi/Hnatkovska_Evans.pdf;
5. **IMF** Recent Experiences in Managing Capital Inflows—Cross-Cutting Themes and Possible Policy Framework, 97 pp. <https://www.imf.org/external/np/pp/eng/2011/021411a.pdf>
6. **Meivitawanli, B.** (2021). Research on the relationship between provincial foreign direct investment and economic growth: An empirical study in Indonesia. Journal of International Studies, 14(1), 241-257. doi:10.14254/2071-8330.2021/14-1/17
7. **Sargsyan, L. & Harutyunyan, H.** Impact of FDI on the economy of Armenia, International scientific journal "Internauka". Series: "Economic Sciences". — 2017. — №5, pp. 92-95
8. https://assets.researchsquare.com/files/rs-167596/v1_stamped.pdf
9. www.armstat.am

Տճանա/Հանձնվել է՝ 17.04.2021

Рецензирована/Գրախոսվել է՝ 28.04.2021

Принята/Ընդունվել է՝ 02.05.2021